



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԻՐԷՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 3


15 ԴԵԿՏ. 1919



ՍԷԼՍԱ
ԳԱՐԱԳԱՇ

100 ՓՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՈՒԴԱՌ**


ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (24 թիւ) 60 Դահ.

Վեցամսեայ (12 ») 30 »

Տարեկան (24 ») 10 Ֆրանկ

ՌԵԾԱԴՐՈՒԹԻՒՆ.— Առաւօտի հասցէն է՝ Պապը Ալի ճատտէսի, թիւ 43, Բ. Դրան
ճիշդ դիմացը:



ՀՐԱԻՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒՆ

«Առաւօտ» հանդէսին խմբագրութիւնը ջանապէս կը հրաւիրէ բոլոր վարժա-
րաններուն տնօրէններն, ուսուցչուհիները և ուսուցիչները, որ հաճին իրենց աշ-
խատակցութեամբ, թելադրութիւններով օգնել իրեն: Սիրով պիտի հրատարակենք վար-
ժարաններու դպրոցական հանդէսներու, յառաջագէտ ուսանողներու մասին հակիրճ
տեղեկութիւններ, դպրոցական լուրեր և այլն:

«Առաւօտ» հանդէսին խմբագրութիւնը ամէն ջանք պիտի թափէ օրէ օր աւելի
գոհացուցիչ ու հետաքրքրական ընելու համար այս թերթը, որ կարեւոր պակաս մը
բացնելու կոչուած է մեր համեստ գրականութեան մէջ:

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ

«ՀԱՅ ԿԻՆ», կիսամսեայ պատկերազարդ հան-
դէս: Տէր եւ Տնօրէնուհի՝ Հայկանոյշ Մառք,
տարեկան բաժնեգին 300 դր. Հասցէ.— Կ. Պոլիս,
Բերա, Օսմ. նամակատուն, փոսթարկի թիւ 192:

«ՈՍՏԱՆ» կիսամսեայ պարբերագիր Արուեստ-
ներու եւ Դրականութեանց. խմբագիր Մ. Շամ-
տանճեան. տարեկան բաժնեգին 500 դր. Հասցէ՝
Բերա, Գապրիսիան փողոց թիւ 37:

«ԱՐԱԳԱՅ» շաբաթաթերթ. օրկան ազգայնա-
կան ազաական կուսակցութեան. Պատասխանա-
տու Տնօրէն Յ. Դարբինեան. տարեկան բաժ-
նեգին՝ 300 դր. հեկան: Հասցէ՝ Բերա Ալիօն փողոց
թիւ 1 կամ 7:

«ՆՈՐ ԴԱՐ» գրական հանդէս ծաղրանկար-
ներով. Տէր եւ Տնօրէն Ա. Յ. Սվանեան: Տարեկան
բաժնեգին 220 դր. Հասցէ՝ փոսթարկի 575:

— «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ» Հ. Մ. Ը. Միութեան կի-
սամսեայ հանդէս: Արտօնատէր Գարիօ Շահինեան:
Տնօրէն Հրաչեայ Տէր-Ներսէսեան, տարե-
կան 24 թիւ 180 դր. Հասցէ՝ Պահճէ-Դաքու,
Հաճի Գէրիի ետեւը, Բասիմ-Փաշա խան թիւ 23:

«ԿԱՎՐՕՇ» զաւելչտական շաբաթաթերթ
Դին 5 դր. Հասցէ՝ Բերա, Օհանեան տպար.

Փետեցեմբ Թեոդիկի Տարեցոյցը:

ՄԻՀՐԱՆ ԶՊՈՒԳՃԵԱՆ

Մեծ շուկայ, Մահմուտ փառայի դրան
կից, թիւ 36:

ձոխ մթերք Զէնիթ, Լոնժին եւ Սարգիսֆ
ժամացոյցներու, ամէն տեսակ շղթաներու, բո-
լիէներու եւ գոհարեղինաց:

Կը գտնուին նուրբ ճաշակով հայ արհեստա-
ւորներու կողմէ պատրաստուած ափսէներ. ար-
ծաթ անուշի դգալներ, մոմակալներ, սիկառի
տուփեր, անուշի ամաններ եւ այլն:

Կ'ընդունուին յանձարարութիւններ թէ՛ աղա-
մանդեայ եւ թէ՛ ոսկի առարկաներու պատրաս-
տութեան համար: Մանաւանդ դպրոցականներու
համար մասնաւոր զեղչ:

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքներ՝ պէտք չէ քաշել տաք մեր փոք-
րիկներուն ակռաները, այդ կերպով կզակի ձեւա-
փոխութիւն յառաջ կուգայ: Դիմեցէք

ՏՈՔԹ. ԱՂԵՔՍԱՆԴԻ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

Որ արտասահմանի մէջ երկար ժամանակ, մաս-
նաւորապէս զբաղած է նաեւ տղոց կաթի ակռա-
ններու դարձանուծի իւստուժնասիրութեամբ եւ ա-
տով մասնագիտութիւն ձեռք բերած:



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Խմբագիր
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Տեղ եւ Տնօրէն
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 3

15 ԴԵԿՏ. 1919

ԳՈՒԹԻՆ ՁԱՅՆԸ

Սիրելի աղաքներ եւ աղջիկներ,

Ձմեռը իր սառ շունչով արդէն վրայ հասաւ : Կարծես ամբողջացնելու համար այն քայքայիչ ու մահացուցիչ գործը, զոր տխրաբոյր աշունը սկըսած էր քանի մը ամիս առաջ : Ծառերուն դեղնած տերեւները շատոնց թափած են եւ անոնց սեւ ու լերկ բուներն ու ճիւղերը կը ցցուին մեր առջեւ իբրեւ չոր կմախքներ : Դաշտերու աշնանային հիւանդոտ կանանշուխեան տեղ արդէն կը տարածուի հողին թուխ միօրինակութիւնը, որ քանի մը օրերու ընթացքին ոլտի ծածկուի ձիւնի սպիտակ սաւանին տակ, եւ արդէն ծածկուած իսկ է շատ տեղեր : Չորերու մէջ մշուշի գորշ քուլաներ կը տարածուին դանդաղօրէն : Իսկ լեռներ շատոնց հաղած իրենց ձիւնէ լողիկները՝ կարծես տխուր խոկումներու մէջ են թաղուած : Գետակներն ու վտակները շունին իրենց ամառնային հմայիչ խոխոչիւնը : ու կարծես բնութեան մէջ ամէն բան կորսնցուցած է իր հմայքն ու հրապոյրը :

Իսկ առդին, քաղաքներու մէջ սկսած է ձմեռնային կեանք մը միօրինակ ու տաղտկալի : Մանաւանդ աղքատ ընտանիքներու համար ձմեռը իրեն հետ կը բերէ նաեւ բ՛լւր հոգեր ու կարիքներ : Օղը յաճախ անձրեւոտ, երբեմն ձիւնոտ, հաճելի տաքուկ օրուան մը կալօտը քաշել կու-

աթււ - 999-3-1

տայ մեզ : Աղքատները սնունդի , զգեստի , կօշիկի և վառելիքի հազար ու մէկ պէտքերով ծանրաքեռնուած՝ կայ օտով կը սպասեն դարնան և ամառուան օրերուն , երբ կեանքը աւելի դիւրատար կ'ըլլայ իրենց համար :

Բայց դուք , պիտի տղաքներ եւ աղջիկներ , դուք որ ընտանեկան համեստ յարկի մը մէջ պատասպարուած էք . դուք որ ծնողքներու , եղբայրներու եւ քոյրերու սիրովն ու գուրգուրանքովը չըջապատուած էք . դուք , որ կշտանալու չափ սնունդ , ձեզ ցուրտին եւ անձրեւին դէմ պաշտպանելու չափ զգեստ ու կօշիկ , մանաւանդ ձեր միտքերն ու սիրտերը կրթելու և ազնուացնելու համար դպրոց ու ուսում ունիք , դուք , նորատի սիրելիներ , չատ բախտաւոր , չատ երջանիկ էք : Ու ասոր համար ձեր առաջին պարտականութիւնն է միշտ չնորհակալ ըլլալ Աստուծոյ , որ այս բոլոր անգին բարիքները չնորհած է ձեզ :

Եւ այս առաջին ու նուիրական պարտականութենէն անմիջապէս ետքը ունիք ուրիշ պարտականութիւն մը , որ աւելի ալիսսիրական ու աւելի երջանկացուցիչ է : Այդ է լսել ձեր սիրտերուն մէջ խօսող **Գուրբին Չայնը** , որ ձեր խիղճի քաղցրաձայն քնարին մէկ գերգգայուն թելն է աստուածալար : Մտիկ ըրէք այդ ձայնին ու այն ատեն ինքնաբերաբար պիտի սորվիք ձեր ամէնէն գործնական ու ազնուացուցիչ պարտականութիւնները , որոնք են . — օգնել թշուառներուն , մխիթարել տառապեալները , ձեր սրտարուխ նուէրներով և ալցելութիւններով ուրախացնել ձեր որք քուրիկներն ու աղքատիկները , ձեր փոքրիկ խնայողութիւններով հիմակուրնէ մասնակցիլ ազգային բարեսիրական ազնիւ նպատակներու , և վերջապէս ընել այն ամէն բաները , զորոնք **Գութին Չայնը** կը թելադրէ ձեզ , իբրեւ ճշմարտապէս գթասիրտ հայ պատանիներ ու պատանուհիներ :

Իսկ եթէ հասկնալ ուզէք թէ ի՞նչ արդիւնք յառաջ կրնայ գալ ասելէ . ըսեմ ձեզ թէ , առաջին օգտակարութիւնը ձեր անձին համար է : Դուք սիրտով ա՛լ աւելի կ'ազնուանաք , աւելի բարձր գգացումներ կը ծնին ձեր սիրտերուն մէջ . կ'զգաք նաեւ այն անսրատմելի երջանկութիւնը , որ յատուկ է բարիք գործողներու , գթութեան գործ մը կատարողներու :

Երկրորդ արդիւնքը այն պիտի ըլլայ որ ձեզ մօտ կամ ձեզմէ հեռու չատ մը թշուառութիւններ պիտի մխիթարուին , արցունքներ պիտի սրբուին , տխուր կեանքեր պիտի գուարթանան , ձեզ հասակակից դեռատիներ պահ մը պիտի մոռնան , իրենց որբութիւնն ու զրկումները : Ասոնք իսկապէս փափաքելի արդիւնքներ չե՞ն :

Այո՛ , ես ալ ձեզի պէս բոլոր սիրտովս պիտի փափաքէի որ անգթութիւն , չարիք , ցաւեր , աղէտներ , թշուառութիւն , զրկումներ , պատերազմներ չըլլային աշխարհի վրայ : Բայց պարզ փափաքը չի բաւեր . պէտք է անոնց արդիւնքը դարմանել : Ու այդ կարելի է միմիայն լսելով **Գուրբին Չայնը** , այդ աստուածային պատգամը , որ միշտ կը թրթրուայ ձեր Հայու զգայուն սիրտերուն մէջ :



Ս Է Լ Մ Ա. Գ Ա. Բ Ա. Գ Ա. Շ
(Ինքզինքը կը ներկայացնէ)

Ես Գարագառ Սեւման եմ.
Հրեշտակի նրման եմ,
Այսպէս կ'ըսեն ինձ համար,
Բայց ասկէ չեմ շրփանար:

Բարի եմ եւ խելօքի,
Կ'ընեն խորաս, խօսք մըսիկ,
Ահա ասոր համար է
Ամեն մարդ զիս կը սիրէ:

Սիրելիք եմ հայրիկիս,
Աչիք լոյսը՝ մայրիկիս,

Տունը, դպրոցն, ամեն տեղ,
Լքեմ խօսքերս սիրազեղ:

Զիս չի կարծեք ինքնագով,
Աղջկակ մը կարն խելօք,
Ինչ որ կ'ըսեմ է իրաւ,
Ինչ որ կ'ուզեմ ամ գրաւ:

Անուշ հայրիկս երբ լքեմ,
Այս խօսքերս, ի՛նչ կ'ըսեմ.

Այսպէս կ'ըսեմ, լա՛ւ գիտեմ,

— «Աս քու լեզուդ ես կ'ուսեմ:»
ԳՐԻԶ—ՔՆԱՐ

ԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՕՐՈՐՈՑԸ ԿԱՄ ԶՈՒՆ



Խորշ մը. — Միաբնակիչը ու անոր զարմանալի բազմապատկումը, սնանկումը, պէս պիտու թիւնները:



Երբ նախահիւթը՝ մինակը կամ ուրիշ նիւթերու խառնուած՝ չըրջապատուած է պատով մը, ինչպէս դեղնուցին պատը, մենք նախահիւթի այդ փոքրիկ տողերակը խառն մը կ'անուանենք: Խորշ մը կրնայ գոյ ըլլալ իբրեւ նախահիւթի մաս մը առանց չըրջապատի և կրնայ որևէ ձևով ըլլալ: Խորշ մը կրնայ սովորաբար գրտնուիլ ուրիշ խորշերու հետ միացած, թէև կրնայ մինակ ալ ըլլալ: Իրականին մէջ հոն կայ կատարեալ անասնիկ մը, ոչ աւելի ոչ ալ սլակառ նախահիւթի միակ խորշէ մը:

Ասոր անունն է (Moneron) միաբնակիչ: Ան՝ ջիւղեր, սիրտ, թոքեր ու մինչև իսկ խորշի չըրջապատ շունի: Բայց նորէն ալ ապրող բան մըն է և ներքին բան մը՝ զայն կը մղէ շարժելու: Քաշելու ուժեր չունի, բայց անոր մարմինը յարմարութիւններ ունի. ինքը նախահիւթի մասնիկ մը ըլլալով՝ անոր իւրաքանչիւր մասը յարմարապէս օժտուած է ամէն նըպատակի համար: Այսպէս, երբ ան շարժիլ ուզէ՝ մարմինէն մատնանման ելունդ մը կ'ելլէ և մնացած մասը ասոր կը հետևի աստիճանաբար, եթէ անասնիկը աւելի առաջ երթայ ուզէ, ուրիշ ելունդ մը մարմինին մնացեալ մասը յառաջ կը տանի նոյն ուղղութեամբ: Միաբնակիչը անասնիկ մը ըլլալով՝ պէտք է սնանի: Զայս կ'ընէ իր մարմինը ոլորելով նիւթի այն մասնիկին շուրջ զոր պիտի ուտէ:

Այս մարմինը դոնդողի մաս մը միայն կ'երևայ, իր գրկած նիւթէն կը ծծէ բոլոր անդատու մասը և յետոյ թող կուտայ զայն:

Միաբնակիչը կը ծնի: Ան մէջտեղէն կը քաշուի և այնչափ կը պրկուի որ մէջտեղ չի մնար ալ: Միաբնակիչը այս կերպով երկու մասի բաժնուած կ'ըլլայ: Այսինքն երկու տարբեր միաբնակիչներ, թէև ո՛րը զաւակ և ո՛րը ծնող ըլլալը անպատասխանելի հարցում մըն է:

Թէև միաբնակիչը օրինակ մըն է միակ խորշի մը (cell), որ իբրեւ անկախ անասնիկ կ'ապրի, բայց խորշը ինքնին է հաղիւ մէկ անհունապէս փոքր մասը ամբողջական կենդանիին կամ բոյսին: Ան յաճախ պատով մը կը շրջապատուի և սովորաբար շատ փոքր է յաճախ այնչափ փոքր որ միաբնակիչը հաղիւ թէ կը տեսնուի մանրադէտով: Հետևաբար հաւի հաւ կիթին դեղնուցը շատ խոշոր խորշ մըն է: Բեղնափոշիի և բեղնահեղուկի մէջի ապրող սլակի բաները խորշեր են, և յաճախ անոնց ձևերը ըսքանչելի են: Իրապէս խորշը իւրաքանչիւր տեսակ հիւսուածի համար մասառուոր ձև կ'առնէ. և մանրադէտին տակ միայն կը նշմարուի անկանոն ջղային խորշը, կլոր ճարպային խորշը, վեցանկիւն գունաւորիչ խորշը, կամ որևէ ուրիշ խորշեր: Ասոնք միացուցիչ հիւսուածներու մէջ դեղեցիկ ու զարմանալի բազմաբնույթիւններ կը ներկայացնեն, թէ ձևով թէ գոյնով: Դիտեմ թէ դեռ աստի ընթերցողներ մանրադիտական իրողութիւններէ աւելի պիտի հետաքրքրուին այն դեղեցիկ ձևերով զոր պիտի տեսնեն մանրադէտին տակ: Ուրովհետև հոն պիտի տեսնեն խորշերու կազմած հետաքրքրական ու գեղեցիկ ձևերը:

ՄԱՐԿՐԻԹ ՌԻՈՐՆԸՐ ՄՈՐԼԻ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Շ Ն Ի Կ Ս



Շատ սիրուն շնիկ մը ունիս:

Շնիկիս անունը Բամպակ է:

Անոր սպիտակ գոյնին փափուկ ու քաւ սեւին համար տուած ենք իրեն այդ անունը:

Անոր վիզէն կարմիր ժապաւենով մը կախած են փոքրիկ բոժոժներ:

Այդ բոժոժները հանելի ձայներ կը հանեն երբ Բամպակ հոս ու հոն կը վազվրզէ սենեակին մէջ:

Կարծես ինք ալ հանոյ՛ք կը զգայ այդ ձայնէն:

Շնիկս շատ մաքուր է. բնաւ աղ-
տոտ չեղեր չի քափառիր: Եթէ աղտոտ
ըլլար չափսի սիրէի գինք:

Ծնողներ չեն սիրեր նաեւ իրենց
տղաքը՝ երբ աղտոտ ըլլան անոնք:

Շնիկս շատ կը սիրէ զիս, որով-
հետեւ զիսէ քէ ես ալ գինքը շատ կը
սիրեմ:

Եթէ կ'ուզես որ ուրիշները քեզ
սիրեն, պէ՛տ է որ դուն ալ զանոնք
սիրես:

Ռէչափ հաւատարիմ անասուն
մըն է իմ շնիկս: Ան ի՛նչ բովէս բնաւ
չի հեռանար:

Իրիկունները անկողինիս մօտիկը
կը պառկի եւ ամենապզտիկ աղ-
մուկէ մը կ'արթննայ, երբ դեռ ես
խունի մէջ եմ:

Առտուն ան ինձմէ աւելի կա-
նուխ կ'արթննայ ու հոս, հոն կը
վազվրզէ ննջասենեակին մէջ:

Կարծես ինձի քսել կ'ուզէ. «Ելի՛ր,
Գուրգէն, ելի՛ր, հագուէ ու դպրոց
գնա՛»:

Անցած ամիս երբ Բանի մը օրեր
հիւանդացայ, շատ տխուր էր նաեւ
իմ սիրական շնիկս: Կարծես ցա-
ւակցիլ կ'ուզէր ինձի:

Գիտէ իրիկունները դպրոցէն ել-
լելու ժամանակս ու հեղապահօրէն
կու գայ ինձի դիմաւորելու: Կարծես
քէ ժամացոյց մը ունեցած ըլլար:

Ըսէ՛ք տղայներ եւ աղջիկներ, ո՞վ
չի սիրեր այսպիսի շնիկ մը:

«Եկո՛ւր, Բամպակ, եկուր:»

Ահա գիրկս է իմ սիրական Բամ-
պակս:

ՆՈՐ ՏԱՐԻՒ ԱՌԹԻՒ



Բոլորեցի ես ութը տարիներ,
Ութը Կաղանդներ տեսայ խնդաքեր,
Ու վայելեցի շատ տեսակ բարիք,
Շատ շատ նըւէրներ, պէս պէս խաղալիկ:
Ուրախ Նոր Տարի, ո՛հ, բարի եկար,
Ինչո՞ւ ուշացար դուն այսչափ երկար.
Տեսնենք այս անգամ ի՞նչ բերիր նըւէր,
Անուշ պրտուղներ, աղուոր պուպրիկներ:

Քեզ շատ կը սիրեմ, ո՛վ բարի Կաղանդ,
Որ մեզ կը բերես պարգեւներ առատ.
Դո՛ւն բերիր նաեւ մեզ ուրախ օրեր,
Ո՛վ Կաղանդ պապուկ, ոգի զուարթաքեր:

Ձեզ շատ կը սիրեմ, յարգելի՛ ծընողք,
Որ չէք խընայեր ամէն խնամք, հոգ.
Պիտի աղօթեմ իմ բոլոր սիրտով
Որ կեանք մ'անհնար ուրախ, անվրդով:

ՄԱՌԻ ՊԱՐՈՆԵԱՆ



ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ

Ս.

Բարի լոյս, ձագուկներս: Առտուն կանուխ ձեզ կու գամ ժրպտերես ու խանդավառ: Ձեզմէ պիտի քաղեմ մէյմէկ համբոյր ու պիտի առնեմ խոստում մը:

Դուք պիտի խոստանաք մտիկ քնել, հնազանդիլ ինձ, իսկ ես ձեզ պիտի առաջնորդեմ ճամբայէ մը, ուր պիտի տեսնէք ոտքերնուդ տակ շուշան, վարդ, շուրջերնիդ միշտ սէր, գգուանք, և վրանիդ երկինք մը կապոյտ, աստեղազարդ:

Այդ ճամբայէն քալելով դուք պիտի աչքիք կեանք մը դուարթ ու անվրդով:

Վաղը առաւօտ արշալոյսին երբ բանաք ձեր աչքերը, դարձեալ ես ձեր մօտ պիտի ըլլամ. օհ:

Բ.

Ահա ձեր մօտն եմ արդէն: Շուտ ցատկեցէք ձեր անկողիններէն, բացէք պատուհանը, շնչեցէք մաքուր օդը և դիտեցէք բնութիւնը:

Տեսէ՛ք, ինչպէս կը հագուի արշալոյսը իր ոսկեհուն պատմութեանը հորիզոնին վրայ: Թռչունները կ'ոտոտեն ճիւղէ ճիւղ, իրենց երգերով փառաբանելով զԱստուած: Մաղիկները արդէն տարածած են իրենց անոյշ բոյրը օդին մէջ:

Աշխարհ իր թմրութենէն կ'արթննայ. նոր կեանքով կը կենդանանայ կարծես:

Սիրելի՛ ձագուկներս, դուք ալ հագուեցէք իսկոյն, լուացուեցէք և խաչակնքելով ձեր երեսը, սրտորատուեցէք ծագող նոր օրէն. նոր բարիքներ քաղել ձեր հոգիին ու մարմինին համար:

Հիմա ձեզ պիտի կարդամ ոտնանաւոր մը: Եթէ ուշադրութեամբ մտիկ ընէք զայն, պիտի գիտնաք թէ ինչպէ՞ս պէտք է ելլել անկողնէն, որպէսզի մայրիկը չի նեղուի ու չի բարկանայ ձեզի դէմ:

ԲԱՐԻ ՏՂՈՒՆ ԱՌՏՈՒԱՆ ԵՐԳԸ

Առտուն կանուխ կ'արթննամ ես
Ձրւարթագին եւ ժրպտերես,
Մայրս ուրախ կուգայ ինձ մօտ,
Համբուրելու գիս գուրգուրոտ:

Կը համբուրէ, կ'ըսէ, զըւարթ,
«Ձոյգ աստղեր են աչուկներդ այդ.
Այտիդ վրայ վարդ է բացուեր,
Կը դիւթեն անուշ բոյրեր:

Եկո՛ւր, հոգիս, մօտըս եկուր,
Շոյեմ մազերդ գեղազանգուր,
Հագուեցրնեմ քեզ սիրելով,
Մօր խընամբովս սիրագորով:»

Բայց... երբ չելած անկողինէս
Թրթուեցրնեմ ես իմ երես,
Ու սրտնեղիմ, լալու պատրաստ,
Պիտի լըսեմ անպատճառ սաստ:

—Ձէ՛, բարի մայր, ես ալ քեզ պէս
Կ'ըլլամ բարի, խնդումներես,
Ձեմ սրտճառեր քեզ նեղութիւն,
Իմ անուշիկ մայրիկս ես դուն:

Սիրելի՛ ձագուկներ, ահա այսպէս կը խորհի ամեն բարի տղայ եւ աղջնակ, երբ առտուն կանուխ արթննայ: Դուք ալ պիտի շուղէի՞ք այսպէս ըլլալ:

Ունիմ ձեզի ուրիշ խրատներ ալ, զորոնք պիտի տամ ուրիշ առթիւ: Առայժմ ցտեսութիւն, անուշիկ ձագուկներ:

ՄԱՅՐ ԵՐԿԱԹ



ԱԶՆԻՒ ՌԲԲՈՒՀԻՆԵՐ



ՎԱՐԴԱՆՈՅՇ ԵՒ ՊԵՐԹԱ

Գիտե՞ս: ի՞նչպիսի շատ, և ի՞նչպիսի աղնիւ որը քոյրեր ունիս, ո՛վ Հայ պատանի. գիտե՞ս թէ անոնց ամէն մէկը ի՞նչ զարմանալի պատմութիւններ ունի քեզի ըսելու՝ եթէ փափաքիս իմանալ և խոստանալ թէ անոնց եզրայր պիտի ըլլաս: Լսէ՛ անոնցմէ մէկ հատը: Անիկա որբանոցէն Վարդանոյշ գրեց ինծի տաճկախօս հայերէնով, և ի՞նչ մարգարաի նման գիրով մը, որու թարգմանութիւնը կուտամ քեզի այստեղ:

«Յարգելի Պարոն, ուղած էիք գիտնալ իմ պատմութիւնս. խոստացայ, ահաւասիկ:»

«Ես Անթաքիացի էի. տասը տարի առաջ թուրքերը այնտեղ ջարդեցին բոլոր Հայերը, ինչպէս նաև իմ հայրըս և հինգ ձօրեղբայրներս: Մայրս կըրցաւ փախչիլ Ամերիկա իր երկու եղբայրներուն քով: Այն ատեն ես հինգ կամ վեց տարեկան էի: Անթաքիայի մէջ անգլիացիները հաւաքեցին բոլոր որբերը, և անոնց հետ երկու եղբայրներս խրկեցին Այնթապ ուր դպրոց դրին. իսկ ես քրոջս հետ խրկուեցայ Պէյրութ՝ Գերմանացի բողոքականներու վարժարանը: Այս կերպով մեր ամբողջ ընտանիքը ցրուցան եղաւ: 1909 Յունիս 19ին մը տայ Այնթապի վարժարանը, հարիւր քսան աշակերտներէ քառասունը հայ էին: Հոն մնացի ինը տարի. վեց տարուան մէջ լրացուցի ուսումս, միւս երեք տարիները վարժարանին մէջ ձեռագործով պարապեցայ, մինչև 1918 Յուլիս 1: Այդ ատեն թուրք հանրմ մը իր տղայոյ իբր Գերմանե-

րենի դասատու առաւ զիս վարժարանէն: Երկու շաբաթ վերջ իմ ընկերուհիս Պերթան եկաւ: Պէյր Պէյրութի մէջ վաճառականութիւն կ'ընէր: Ամառը շատ տաք ըլլալուն Պէյրութէն մէկ օր հեռու գիւղ մը օդափոխութեան դացած էինք. օր մ'ալ այդ տեղէն իմացանք որ Անգլիացիները և Ֆրանսացիները Պէյրութ հասած են, և Արաբները ըսկած են հալածելու այնտեղի թուրքերը: Մենք ամէն բան Պէյրութի մեր տանը մէջ ձգելով ճամբայ ելանք դէպի Պոլիս: Տայաքի կայարանին մօտ մեր գտնուած պանդոկին դիմացը տաճկական մեծ ռազմամթերք մը կար: Անգլիական օդանաւ մը յանկարծ կրակ տուաւ անոր. ռազմամթերքը բռնկեցաւ սարսափելի կերպով, և պայթումները տեկցին մինչև առաւօտ: Ստուգիւ, Աստուած պահեց զմեզ իրական մահուրնէ մը: Յաջորդ օրը ճամբայ ելանք. Պէրթան և ես թուրքի զգեստով էինք: Երբ Հալէպ հասանք, փափաքեցայ տեւեկ հօրեղբայրներս որ հոն էին բայց հանրմը չի թողուց: Պոլիս հասնելով Գըզըլ Թօբրազ Զիւհտի բաշայի ապարանքը բնակեցանք: Այնտեղ ես և Պէրթա ստիպուած էինք տանը ամէն ծառայական գործերը կատարելու: Պէրթա կերակուր կ'եփէր, ես ծառայելէ զատ կը խընամէի նաև չորս տղաքներ որոնց մեծը տասը տարեկան էր: Հանրմը շատ չար կին մըն էր. ամէն օր կը ոխ կը հանէր տանը մէջ: Շաբաթը երեք անգամ տասը կամ քսան հոգի հիւր կուգային, ու կը խաղային դրամով. այն ատեն անոնց ցերեկուան և գիշերուան ճաշը մինք պիտի պատրաստէինք. այլևս առտուրնէ մին-

և կէս գիշերուան ժամը երկուքը
տասրի վրայ կը մնայինք :

Օր մը խմայանք ուր Անգլիացի-
ներ և ֆրանսացիներ Պոլսոյ մէջ
թուրքերու քով գտնուող հայ աղ-
ջիկներ կը հաւաքեն . հանրմը վախ-
ցաւ , և չ'ուզելով մեղի կորսնցնել
համազանց խռատացուց մեր վրայ իր
հակադուշիւնը : Այնուհետեւ ութը ա-
միսի շափ գրեթէ բանտարկուածի
պէս մնացինք : Մեր մեծ նեղութեա-
նը մէջ մենք շարունակ աղօթք կը-
նէինք : Օր մը տնեցիները ամէնքն ալ
թատրոն գացած էին . ես և Պէրթա
երկու փոքր աղայոց հետ քէօշկը մը-
նացած էինք . ատեն էր առիթէն օգ-
տուելու . բայց ինչպէս . խորհեցանք
և որոշեցինք : Ամիջապէս փախչիլը
կարելի չէր . ես պիտե մնայի տունը
աղայոց քով , Պէրթա պիտի երթար
Բերա՝ Անգլիական զինւորական հը-
րամանատարին , հասկցնելու համար
մեր վիճակը : Պէրթա մեկնեցաւ իս-
կոյն , և ստուգիւ երեկոյին անեկա
վերադարձաւ հեւ իհեւ վաղելով ,
երբ դեռ տնեցիները չէին վերադար-
ձած թատրոնէն : Պէրթա գացած դը-
տած էր Անգլիացի հրամանատարը ,
լաւ ֆրանսերէնով հասկցուցած էր
մեր երկուքին վիճակը , և ոտացած
էր անկէ անգլիերէն մեծ պաշտօնա-
գիր մը ուղղուած պէյին և հանրմին
որով կը հրամայուէր անոնց՝ յաջորդ-
օքը այս երկու Հայ աղջիկները յանձ-
նել Անգլիական կառավարական պաշ-
տօնատունը , հակառակ պարագային
չատ մեծ պատիժ պիտի տնօրինուէր
անոնց համար :

Տնեցիները դեռ բան մը չէին
գիտեր . միւս առաւօտ դրացիներէն
մէկը սակայն հանրմին խմացուց Պէր-

թային դուրս ելած ըլլալը : Հանրմը
կատարած սկսաւ գանակոծել Պէրթան ,
և երբ ուղեցի ու ազատեմ ան ծե-
ծեց նաեւ զիս և ուղեց ամիջապէս
երկուքս ալ յանձնել սատիկաններուն :
Բայց երբ իրեն ցոյց տուինք Անգլիա-
կան հրամանագիրը , շուտով իր բար-
կութիւնը սարսափի փոխուեցաւ : Ա-
միջապէս մեղի դարձուեցան մեր
դռքերը , և մենք ազատազրուած
ներկայացանք Անգլիական պաշտօնա-
տունը : Նոյն տեղէն դրուեցանք սր-
բանոց , ուր կը մնանք մինչև հիժայ :

Վերջացնելէ առաջ ըսեմ թէ այս
երկու աղնիւ Հայ որբուհիներէն Վար-
դանդանոյշը որ բողոքական է , դեռ
նոր շատ բարի լուրեր ստացած է Ա-
մէրիկայի մօրմէն , և թերեւ քանի
մը օրէն կը մեկնի անոր քով . իսկ
մրաջան Պէրթան որ միայն ֆրանս-
սերէն և թուրքերէն գիտէ և կաթո-
լիկ է , ողջ գտած է իր մայրը երու-
սաղէմի մէջ . որու հետ կը թղթակե-
ցի , միշտ խորհրդածելով անոր քովը
երթալու միջոցներուն վրայ :

ՎԱՀՐԱՄ Մ. ԽԱՉԻԿԵԱՆ

ՀՐԱԽԻՐ

Հանելուկներ , նկար հանելուկ-
ներ , հաշուական հանելուկներ , բա-
ռեղծութեան սիրով պիտի հրատա-
րակենք : Կը խնդրուի լուծումը միա-
սին զրկել :

ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒՆ

ԱՌԱՍՈՏ Հանդէսի խմբագրու-
թիւնը , ինչպէս կը տեսնուի սիրով
կը հրատարակէ անունները այն աղ-
նիւ նուիրատուներուն , որոնք ԱՌԱ-
ՍՈՏ Հանդէսը կը նաւերեն Ազգ . որ-
բանոցներու , վարժարաններու , ըն-
թերցարաններու և աղքատ ուսանող-
ներու :

ԱՌԱԿԱՆԻ

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ

Աղջիկ, բեզ կ'ըսեմ,
Հարսնո՛ւկ, դուն լրսե՛.
Բայց երբ չի լրսեմ՝
Ուզածըդ քոն:

Այս օրուան փուլեր՝
Վաղուան անուլեր.
Այսօր ոխերիմ,
Վաղը մըսերիմ:

Անխելք կը տաքի,
Խելօք կ'ուլե միտ.
Ուզողը գանգաւի՝
Այս առածն է ռա՛ս հիտ:

Անխելք հարսին՝ անխելք փեսայ,
Է՛ն, իբաւ ալ յարմար է սա՛:
Բայց կոսրի այն բախտին գորիչ
Որ վրեպներն ալ իր չեն փչ:

Անհարաւիր խառն է հազեր,
Գիտցեր է որ խառն է հոսեր.

Ունեցողը, էն, է՛րբ գիտցաւ,
Չունեցողին միմակն ու ցաւ:

Առնելիք ասեղ մըն է,
Երկաթին գին կը հարցընէ.
Անոնց համար է այս առակ,
Որ կը հաշուեն երկար բարակ:

Ապրողին՝ ապրանք մը,
Մեռնողին՝ պատանք մը.
Հարուստն իսկ ի՞նչ տալու,
Աշխարհէս անիրաւ:

Աղփաշին հացն ուտողը,
Թող գիտնայ, չի կոտանար,
Չար սիրտի վախն ու դողը
Արգիլելն է անհրաւար:

Անուշ բրնձիւրին
Ինչուան ծերութիւն,
Պէտք ենք ունենալ,
Այ՛ն, ես ու դուն:

Ա.Ա.Ա.Ա.Ա.Ա.

ԹԻՒ 2 ԲԱՌԵՂԾՈՒԱԾԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Բառերը ծուածին լուծումն է ԴԳԱԼ:

Դգալ = գործիք մը

Դալ = աների այլ

Ալ = մակրայ

Լ = 30

Լուծողներուն անուններ.

Առաջին անգամ լուծող և մրեւ-
նայն պահուն մեզ հաղորդողներ
եղան Պարոնայք Կիւմրէճեան Սան
Սթէֆանօէն, Միհրան Պէզճեան Կէ-
տիկ Փաշայի Ամերիկեան վարժա-
րանէն, որոնց կը նուիրենք մէջմէկ
բանաստեղծ. և պատմ. հատորներ:

Լուծեցին նաեւ Յակոբ Զ. Եէմէ-

նիճեան (Գրնալլէն), Հէնրի Զար-
դարեան և Վահէ Այվաղեան (Կէ-
տիկ Փաշայի Ամերիկեան վարժարա-
նէն), Եղուարդ Գ. Սիմօնէճեան (Պէ-
զաղեան վարժարանէն), Սեպուհ
Աղաթեան (Տիւզճէն), Օննիկ Ա.
Տէր-Աբրահամեան, (Բերա՝ Բանկալ-
թիէն) և Թորգոմ Սբապ (Կէտիկ փա-
շայի ազգային վարժարանէն): Այս
վերջինին ստանաւ ոչ-պատասխանով
կատարած լուծումը կը դնենք ստո-
րեւ.

«Ա.Ա.Ա.Ա.Ա.» նորահասներու հանգէսի
Գրիչ—Քնարին

Թիւ 2 բառերը ծուածին ըսած գործիքին
անունն է ԴԳԱԼ.
Լուծելու համար, պէտք էր շատ տքալ:

Ու ես տքացի,
 Չարկի աքացի,
 Գլուխին՝ Դ ին՝
 Որ մնաց ԳԱԼ,
 Չարկի անգամ մ'ալ,
 Գանկին՝ Գ ին
 ԳԱԼ չէզոք բային:
 Առջիս գտայ ես,
 Ա՛լ մակբայը վէս:

Յոգնեցայ ես ալ,
 Ասէք ձեր ԴԳԱԼ
 Տուէք եռետունս,
 Որ տամ անունս:

ԹՈՐԳՈՄ ՍՐԵՊ

Ծ. Խ.—Կը հրաւիրենք Պ. Թոր-
 գոմ Սրապը ստանալ խմբագրատու-
 նէս իր պահանջած երեսունը, քանի
 որ սրամտօրէն յաջողած էր լուծել
 բառեղծուածը:

— 1 թիւ հանելուկը լուծած էր
 նաեւ Պ. Անդրանիկ Վարդանեան,
 Ատաբաղարէն:

ՀԱՆՅԵԼՈՒԿ

ԹԻԻ 3

1. Կիլիկեան գետ մը:
2. Կիլիկեան դաշտ մը:
3. Կիլիկեան Բերդ մը:
4. Պատմական, հին անունը Կի-
 ւիկիոյ սահմանակից երկրի մը, որուն
 Սուլթանները յաճախ կ'արշաւէին
 Կիլիկիա:
5. Կիլիկեան ուրիշ բերդ մը:
6. Անատոլուի դէպի հիւսիսը
 գետի մը հին անունը:
7. Կիլիկեան մեծ քաղաք մը:

— Այս եօթը պատմական-աշ-
 խարհագրական անունները տրուած
 կարգով գտիր ու տակէ տակ այն-
 պէս մը գրէ որ անոնց առաջին գի-
 րերը վերէն վար մէկ կարգի վրայ
 գան: Այդ գիրերէն վերէն վար պի-
 տի կարդացուի երկրանուն մը, որ

սիրեցեալ մէկ մասն է մեր ամբողջ ա-
 կան Հայրենիքին: Գրիչ-Քնար
 Առաջին լուծողը կը ստանա
 վեցամսեայ «Առաւօտ» հանդէս:

ԲԱՌԵՂՆՈՒԱԾ

ԹԻԻ 4

Բառ մըն եմ ես երկու վանկով,
 Չեմ գտնուիր ոչ մէկուն քով.
 Բայց ես ունիմ շատ մ'եղբայրներ,
 Որոնց մէկուն թէեւ շատ մերձ
 Կը գտնուիս, այսու հանդերձ
 Ամբողջութեամբ զայն չես տեսներ:

Եթէ կիսես ճիշտ մէջտեղէս,
 Երկու բառեր պիտի գտնես,
 Որոնց առաջինն է մէկ միջատ,
 Իսկ երկրորդը միանգամայն
 Թէ պտուղ մ'է թէ ածական.
 Գտի՛ր տեսեմ, մի խորհիր շատ:
 Բերա ԾՆՆԻԿ ՏԷՐ ԱՅՐԱՀԱՄԵՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«ԱՌԱՎՈՒՄ» նորահասներու հանդէս
 կը նուիրեն Տէրք դեղագործ Վահան Պէ-
 պերեան 1 օր. (Կիւմիլճինէի ազգ. վա-
 ժարանին), ծանօթ ապահովագրիչ Մ.
 Բեւեան 4 օր. (Պարտիզակի ազգ. վարժա-
 րանին, Պարտիզակի Որբանոցին, Իզմի-
 ազգ. վարժարանին եւ Որբանոցին),
 Տիւզենճեան 2 օր, (Կէտիկ փաշայի որբ-
 նոցին), Կալաթա Սէրայ, ծանօթ սեղան-
 ւոր եւ ծխավաճառ Թորգոմ Աստուած-
 տուրեան 10 օր. (Ակնայ ազգ. վարժար-
 նին), Համբարձում Զանտրեան 2 օր. վե-
 ամսեայ (Ամասիոյ ազգ. վարժարանին),
 Կարապետեան եղբարք 1 օր. (Կէտիկ Փա-
 շայի Որբանոցին), Միհրան Գարագա-
 եան 1 օր. (Մագրի գիւղի Որբանոցին),
 տամնարոյժ Համբրժ. Գուլումճեան 1 օր.
 Իզմիտի որբանոցին), Հայր Յովսէփ Տ-
 Մարգարեան 1 օր. (Նշան Թաշի մանչե-
 րանոցին), Զարեհ Կոկեան (1 օր. Կէտ-
 Փաշայի որբանոցին):

ԶԱՐՀՈՒՐԱՆՔԸ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Ժ021, Բ. 1.

Թարգմանեց Հ. ՅՈՎԱԿԻՄ ՏԵՐ-ՄԱՐԴԱՐԵԱՆ
Վիեննական Մխիթարեան

— Մայրս ինձի փողոց ելլելը ար-
գիլեց, մինչեւ իսկ դիմացը երթալ,
տեսնելու համար Բագրատը... Ան
ըսաւ թէ կրնայ ըլլալ որ ջարդի
փոխուի:

— Արդեօք Ռուսները զմեզ պիտի
չազատեն:

— Լուէ՛: Ատիկա եթէ քեզմէ
լսեն՝ զքեզ բանտ կը նետեն:

— Եթէ ջարդ ըլլայ, Փրանսա-
կան հիւպատոստրանը կ'երթամ:

— Խե՛նթ... ատիկա անկարելի
է... քանի որ հիւպատոստրան չկայ
պատերազմէն ի վեր:

— Այն ատեն Քոյրերուն կ'եր-
թամ:

— Ահ, աւատիկ Լորիսը, Սանա-
սարեան վարժարանէն կը դառնայ:

— Աւելի լաւ, անիկա իր դա-
սերը ուսանելու համար տանիքին
վրայ պիտի գայ. մենք առանձինն
պիտի չըլլանք:

— Բարեւ, Լորիս:

— Բարեւ, գիտէ՞ք... վարժա-
րանը փակուած է... ոստիկաններ
եկան, դասի ստան, ձերբակալեցին
դասատուները և տարին զանոնք:
Ես փախայ...

— Ահ, ինչ է այս աղմուկը:

— Հրացանի մը հարուած, շո՛ւտ,
ներս փախէք, ահաւատիկ Քիւրտերը:

Լորիս և Սրբուհի անհետացան և
պահուըտեցան երգիկին ետեւը: Ա-
նուշաւան մնաց առանձին: Սն հե-
տաքրքիր էր և կ'ուզէր տեսնել:

Գ.

Հրապարակը, վարը, ուղտերու
կարաւանը կ'անցնէր բեռնաւորուած՝
ռազմանիւթի սնտուկներով: Անոնց
ճամբայ տալու համար հինգ կամ վեց
եղան կառքեր շարուած էին պատե-
րուն երկայնքը: Եզները եւ դոմէշ-
ները պառկած էին գետնին վրայ ու
կ'որոճային: Այս սայլակներուն վրայ
կային հայ գիւղացիներ, որոնք ի-
րենց գիւղերէն կը փախչէին տաճիկ-
ներու կողմէ կողոպտուած: Անոնք
պատառատուն զգեստներով էին,
վախ, երկիւղալի և արիւնաթա-
թաւ:

Գունդ մը տաճիկ զինուորներ
հրապարակէն կ'անցնէին՝ բերդի մը
պահակը փոխելու համար. ամէնքն
ալ մոխրագոյն տարազ հագած էին,
կարճահասակ, նիհար և թուխ դէմ-
քով: Գերմանացի ենթասպայ մը,
գեր ու հաստ, գամբուի նման կը
հրամայէր անոնց: Չանոնք տողանց-
քի քայլով կը քալեցնէր և երբեմն
ալ կօշիկի հարուածներ կուտար ա-
նոնց՝ երբ քալուածքնին պիտի չըլ-
լար:

Հայ ջրկիր մը կ'անցնէր իր երկու
պղինձէ դոյլերով, որոնք երկայն
փայտի մը ծայրերէն կախուած էին.
եւ զոր ուսին վրայ կը կրէր: Գեր-
մանացի ենթասպան, որ զինքը չէր
նշմարած, գլխովը զարկաւ դոյլերէն
մէկուն, որ զինքը թրջեց... Գեր-

մանացին բարկացած՝ բռունցքի հար-
ուած մը տուաւ ջրկիրին, որ գլտո-
ւեցաւ գետին՝ շոյլերովը միասին:

Քիւրտերը որ կը շրջագայէին այն
տեղուանքը — ծանօթ իրենց երկայն
զգեստներով և գլխաւորաբար իրենց
թաղիքէ այլանդակ գլխարկներով —
օգտուած այդ աղմուկէն՝ նետուե-
ցան եղան կառքերուն մէջ գտնուած
հայ գիւղացիներուն վրայ և քանի
մը ցորենի պարկ յափշտակեցին:

Առնցմէ մին, աղմուկը աւելցնե-
լու համար, քաշեց երկու երեք հրա-
ցանի հարուած և փախաւ:

Անուշաւան կը վախնար. Այտու-
հանդերձ կը դիտէր միշտ այն աղ-
տոտ և պատառատուն խուժանը, որ
կը վխտար հրապարակին վրայ: Եւ
յետոյ որովհետեւ քիւրտ մը կը ծեծ-
կըւէր Հայու մը հետ, գերման սպան
խուլի մը պէս կը պոտար. ուղտերն
ալ տեսակ տեսակ ձայներ կը հանէին
և գլուխնին դէպի գոմէշները կ'եր-
կարէին: Անուշաւան չատ վախցաւ
և նախընտրեց այլեւս հրապարակին
չնայել:

Դ.

Անուշաւան ձայն մը լսեց իր ե-
տեւը: Մօտակայ մզկէթին մօլլան էր
որ կ'երգէր օրուան հրաժեշտը մի-
նարէին բարձունքէն, այնչափ քթէն
կ'երգէր որ Անուշաւան խնդալէն
սկսաւ կողերը բռնել:

Բաւոր միւս մզկէթներուն վրայ
տեսնուեցան ուրիշ մօլլաներ ալ, որ
նոյնպէս սկսան երգել ձեռքերնին
դէպի երկինք բարձրացուցած... ամ-
բողջ քաղաքին վրայ մէկ ձայն հրն-
չեց... Այլտ'ն, ա'ա'ն... ա'ա'ն...:

Տէվէ Պրունիի բերդերէն մէկը
սկսաւ գոռալ: Անուշաւան մտածեց
որ Բամազանը իրիկուրնէ կը սկսէր:

Երկրորդ հարուած մը պայթեցաւ,
յետոյ երրորդ մը... Անուշաւան ու-
րախութենէն վեր ցատկեց՝ ենթա-
դրելով որ Ռուսերը եկած են լերան
միւս կողմէն և թէ գերման ենթա-
պան պիտի պատժուէր:

Բայց Անուշաւան յանկարծ սաս-
տիկ վախցաւ: Քաղաքին ամէն կող-
մէն զարհուրելի ձայներ կը լսուէին,
վայրենի անասուններու ոռնումներ,
աղիողորմ ձիւներ, տքոցներ, խելա-
զար ցաթկուտուքներ, հրացանի եւ
ատրճանակի պայթումներ կը լսուէին:
Քաղաքին այլեւայլ տեղերէն հրդեհի
լոյսեր, մուխեր և կայծեր դուրս
կուգային: Տանիքներուն վրայ այւ-
լանդակ ստուերներ կը ցցուէին բո-
ցերուն մէջէն, նման պղտիկ անտառ-
ներու:

Անուշաւան այլեւս նայիլ չէր հա-
մարձակեր ո'չ փողոցին, ոչ ալ հրա-
պարակին կողմը:

Ան, պահ մը գազափարն ունե-
ցաւ տուն վերադառնալ, բայց ոտ-
քերը կթոտեցան: Խեղճ փոքրիկը
զգայագիրկ վառարանին ետևը կրծ-
կըւեցաւ:

Ե.

Յանկարծ տանիքի մը վրայ ե-
րեւցաւ Մատաթեան էֆէնտի: Ան,
Մատաթեան էֆէնտին չատ կը սի-
րէր, որովհետեւ իր գրպանները միշտ
կը լեցնէր շաքարով: Անիկա իր տա-
րիքոտ սրունքներովը շուտափոյթ
կ'ընթանար, իր բրտէնկոթին քղան-
ցքները կը կառչէին տանիքին պա-
տշգամներուն և իր կարմիր ֆէսին
ծոպը կը տարուբերէր օդին մէջ՝ փո-
կէ խարազանի նման: Խենթի պէս
կը վազէր՝ ցատկելով ստանիքի տա-
նիք, ոտքերը իրարու պլլուած, ան-
ցնելով նեղ փողոցներէ:

Անուշաւան երբեք չէր դիտեր Մատաթեան էֆէնտիին այսչափ արագոտն ըլլալը : Սակայն , թիչ վերջը հասկցաւ թէ իր բարեկամը ինչո՞ւ համար այսպէս հապճեպով կը վազէր : Տեսաւ թէ , անոր ետեւը յանկարծ քիւրտ մը երեւցաւ , յետոյ ուրիշ մը , յետոյ երրորդ մը , զինուած լախտերով և մեծ դաշոյններով , որոնք օդին մէջ վայրագօրէն կը ճօճէին . . .

Քիւրտերը կը յառաջանային , երկու տանիքի հեռաւորութիւն միայն մնացած էր :

Երկու վայրկեանէն պիտի հասնէին Մատաթեանին :

Այն ատեն Անուշաւան ոտքի ելաւ , պիրկ մը կեցաւ և իր փոքրիկ ձեռքերը շարժեց գոչելով .

— Ասկէ՛ , ասկէ՛ , Մատաթեան էֆէնտի , շո՛ւտ շո՛ւտ :

Եւ երդիկին դուռը ցատկելով զայն կռնակի վրայ բացաւ , մինչեւ որ ծեր բարեկամը հասաւ : Այն ատեն դուռը դոցեցին անոնց ետեւէն եւ պարզունակը դրին :

Ո՛ւֆ . . . Ատենին դոցեցին : Երեք քիւրտերու տանիքին վրայ ցատկելը լսեցին : Դուռը կատաղի կերպով ցնցուիլ սկսաւ : Վայրկեան մը այնպէս թուեցաւ թէ ան տեղի պիտի տայ , բայց կղպանքները ամուր էին :

Քարերու կարկուտ մը տեղաց ծխնելոյզին վրայ , կարծես ամբողջ բանակ մը իրենց գլխուն վրայ խուժեց . . . յետոյ , աղաղակներու , սոսկալի սպառնալիքներու տեղատարափէ մը վերջ , Քիւրտերը ուրիշ տանիքի մը վրայ ցատկեցին :

Մատաթեան էֆէնտի փոքրիկ աղջիկը գիրկը առնելով և արագօրէն տանը երկու յարկերէն վար իջաւ :

2 .

Անուշաւանին մայրը աղջիկը կը փնտռէր ամէն տեղ : Կը կարծէր թէ մեռած կամ առեւանգուած էր Քիւրտերէն , բայց երբ Մատաթեան էֆէնտիին բազուկներուն մէջ տեսաւ զանի՝ ուրախացաւ :

Ծառաները մեծ դռները կղպելու դրաղած էին :

Պէտք էր թնդանօթի հարուածներ տալ զանոնք խորտակելու համար :

Բարձերով և անկողիններով դոցեցին վանդակապատ պատուհանները , արգիլելու համար դնտակներուն մուտքը , նաև օդամուտները և կղպանքները աչքէ անցուցին : Բոլոր լապտերները մարած և ամբողջ ընտանիքը տանը անցքին մէջ ժողվրւած՝ ականջ կը դնէր դուրսի աղմուկներուն :

Հոն էր Մատաթեան էֆէնտին , Տիկին Զանարեանը , Աթինա յոյն աղախինը , Սըրրի և Գրիգոր երկու անձնուէր ծառաները , մին թուրք իսկ միւսը հայ : Տիկին Զանարեան կուլար , որովհետեւ ո՛չ իր ամուսինը և ո՛չ Պարոյրը եկած չէին : Մատաթեան էֆէնտի կուղէր հանդաշտեցնել զինքը , թէեւ ինքն ալ կը դողար չափազանց :

— Արդեօք մեծ ջարդին նմանը պիտի սկսէր վերստին . . .

— Գերմանները , որոնք բանակին հրամանատարներն էին , վերջապէս քրիստոնեաներ էին , անոնք չատ լաւ կրնային այնպիսի սոսկումներու առաջքն առնել . . .

— Գերմանները , աիկի՛ն . . . բայց անոնք են որ պիտի հրամայեն ջարդերը . . . անոնք վատթարադոյն են քան թուրքերը :

— Ասիկա արեւմուտքի արուար-
ձաններէն սկսաւ... արդէն հոն
հրդեհները կը տեսնուին...

— Գոհ եղէք որ ձեր տունն ալ
կրակ չառաւ...

— Վախնալու բան չկայ, Մա-
տաթեան էֆէնտի, իմ տունս Ծօն
Կրիզաուի տանը կից է, որ գերմա-
նացի հրամանատարներէն մին է...
քաղաքը Քիւրտերով լեցուած է...
այս հրոսակները, այս աւաղակներ-
ը... Առտուած իմ... ինչ պիտի
ըլլանք...

է.

Խոշոր հարուածները դուռը թըն-
դացուցին: Բացէ՛ք, բացէ՛ք...

Չայներ, հեծկլտանքներ, յուսա-
հատ հառաչանքներ...

— Մի՛ բանաք, չըլլայ թէ բա-
նաք, պոռաց Մատաթեան էֆ.:

— Սրբունիին ձայնն է մայրիկ...
բացէք իմ փոքրիկ Սրբունիս...

— Անոնք զանիկա պիտի մեռցը-
նեն:

— Եթէ Սրբունը չէ՛ անիկա:

— Բացէ՛ք, բացէ՛ք, գթութի՛ւն,
գթութի՛ւն:

Գրիգոր հանեց պատուհանին առ-
ջեւէն անկողինը ու ակնարկ մը նե-
տեց, և յանկարծ պոռաց. Քիւր-
տերը, Քիւրտերը:

— Բացէ՛ք Սրբունն է, կ'ըսէր Ա-
նուշաւան հեծկլտալով:

Մատաթեան էֆ. արագօրէն
վազեց, Սըրբիի և Գրիգորի օգնու-
թեամբ քաշեց հաստ երկաթները և
կիսաբաց դռնէն Սրբունն այլայլած
դէմքով ներս մտաւ:

Անոր հետ էին իւր մայրը և
Բագրատը, և իւր փոքրիկ հօրեղ-
բորորդին, որ զիմացը կը բնակէր:

Ամէնքը ներս մտան, մինչ քարերու
տեղատարափ մը վրանին կը տեղար:

Քար մը Սրբունի երեսին վրայ
գալով, ինկաւ սալահատակին վրայ:

Հազիւ ներս մտաւ Մատաթեան
էֆ. դուռը հրելով փակեց ուժգ-
նօրէն, բայց Քիւրտերէն երկուքը
յարձակելով՝ հրեցին դուռը, փոր-
ձելով ներս խուժել փախստուկան-
ներուն ետեւէն:

Սըրբի և Գրիգոր Մատաթեանին
օգնութեան փութացին, բայց չյա-
ջողեցան գոցել...

Արդեօք Քիւրտերը իրենց ընկեր-
ները օգնութեան պիտի կանչէին,
որ դուռնէն բռնի ներս մտնելով
ամէնը ջարդեն:

Դռան երկու կողմերէն կատաղօ-
րէն կը մարտնչէին և կարծես թէ
քիւրտերը տակաւ կը յաջողէին...
տղաք զարհուրած կը ճչային:

Ի վերջոյ յաջողեցան գոցել դու-
ռը: Քաշեցին դրան երկաթները ու
գոցեցին նմանապէս պատուհանները:
Սակայն այս պահուն անձրեւի նման
գնդակներ սկսան տեղալ տան ձակ-
տին: Ապակի մը կոտրելով գնդակ
մը եկաւ Գրիգորին ձեռքը ծակեց,
բարեբախտաբար երկաթէ վանդակ-
ները կը պաշտպանէին պատուհան-
ները... Քիւրտերը չէին կրնար մրտ-
նել:

Այսուհանդերձ, որոշեցին պա-
տրասպարուիլ մառաններու մէջ:

Քարը խոշոր ձեղք մը բացած էր
Սրբունի շրթունքին վրայ, որ կ'ա-
րիւնէր և ուռած էր:

Ութ օր անոնք փակուած մնա-
ցին մառանին մէջ: Արգելուեցաւ
տղոց վեր ելլել, գնդակներուն և
քարերուն պատճառաւ, որոնք ներս
կուգային կոտորուած պատուհաննե-
րուն փեղկերէն:

Ուսուցիչները ոկսան սպառիլ :
Ուրիշ բան չէր մնացած քայց եթէ
միայն չորցած չամիչները և հոյնէ
պատրաստուած անուշեղէնները :

Ամէն կողմ հրացանած գութեան
ձայն երբեմն ընդհատ ու բուռն թա-
փով և երբեմն ալ ցանցաւ : Կամաց
կամաց մեռելական խոր լռութիւնը
քաղքին վրայ իջաւ . . .

Սրբի համարձակեցաւ փողոցը
ելլել , և նոյնիսկ Անուշաւան սկը-
սաւ պատուհանէն փողոցը դիտել :

Դիմացը՝ Բագրատին տան դուռը
բաց էր : Անոր ամէն բանը կողոպ-
տուած էր եւ ինչ որ աւարառուները
չէին կրցած տանիլ՝ փողոցը նետած
բոցավառ կ'ըլլային , . . . Բագրատ
իր գեղեցիկ խաղալիք-ձին ճանչ-
ցաւ կիսով չափ այրած , որ անցեալ
տարի Պոլսէն իրեն նուէր բերուած
էր :

Անուշաւան հեծկլտալով գետին
փռուեցաւ :

— Հայրի՛կ , Պարոյրն ու հայրիկս
կ'ուզեմ . . .

Այդ արցունքներուն մէջէն ձիու-
ւորներուն հասնիլը տեսաւ : Թուրք
սպայ մըն էր որ բազմաթիւ հետե-
ւորդներով կուգար , գեղադէմ երի-
տասարդ սպայ մը , զոր յանկարծ
ճանչցաւ :

— Մայրի՛կ , մայրի՛կ , գոչեց ,
ահաւասիկ թափուր պէյը , հազա-
րապետ ֆօն Կրիպառի քովը կը կե-
նայ . . . Թայֆուր պէյը , մայրի՛կ :
Թ .

Անուշաւան օգնեց իր մօրը՝ ըզ-
գեստները հագնելուն . հազցուց ա-
նոր սեւ անդուսէ մեծ «չարշաֆ»ը ,
առանց որու դուրս չէր կրնար ելլել
ո՛չ մէկ հայուհի : (Շար)

ՈՐԲԱՆՈՅԻ ՄԷՋ ՀԱՆԴԵՍ

Նշան Թաշիի որբանոցին բացման
առթիւ , նախընթաց կիրակի օր գե-
ղեցիկ հանդէս մը կազմակերպուած
էր նոյն որբանոցին մէջ : Որբերը
որոնք տարի մը առաջ նոյնիսկ ի-
րենց մայրենի լեզուն չէին գիտեր ,
չատ յաջող արտասանութիւններ ը-
րին և մեծ գոհունակութիւն պատ-
ճառեցին ներկաներուն : Եկած էր
նաեւ Գումդարուի Քնար Փանֆա-
ռը , ինչպէս նաեւ Պօյ-Սքաւթները :
Ներկայացուցաներէն յետոյ , Ս . Պատ-
րիարքը և Հայր Յովսէփ Տէր-Մար-
գարեան ճառեր խօսեցան և շեշտե-
ցին ժողովուրդին որ թօթափէ ան-
տարբերութիւնը հանդէպ հուրէ եւ
սուրէ ազատող մեր որբերուն :

Խօսեցաւ նաեւ Միսիս Հայգէր և
իր մասին եղած զովեստներուն հա-
մար յուզեալ շեշտով շնորհակալու-
թիւն յայտնեց : Հանդէսը փակուե-
ցաւ թէյասեղանով :

Հանդէսին սկզբնաւորութեան
Մր . Արնուտ և Տիկին Պրիսթօլ սի-
նէմայի ֆիլմի մէջ առին որբուկնե-
րուն կատարած տողանցները : Որ-
բանոցին մէջ տիրող կարգապահու-
թիւնը լաւ տպաւորութիւն թողուց
ամէնուն՝ ինչպէս նաեւ Մր . Արնուտի
և Տիկին Պրիսթօլի վրայ :

ՅԱՌԱՋԱԴԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Կէտիկ Փաշայի վարժարանէն . —
Իրենց կարգերուն մէջ առաջին հան-
դիսացած են . Բարձր . Բ . կարգէն
Յր , Նեվրիկ Սիմօնեան . Բարձր . Ա .
կարգէն՝ Պ . Շաւարշ Կիւմրէշկէր-
տանեան , Պ . Յարութիւն Յովսէփ-
եան , Յր . Մաքրուհի Տէր-Գրիգոր-
եան :

THIRD LESSON IN ENGLISH

NOUNS

EXERCISE

Father	Հայրիկ, հայր
Mother	Մայրիկ, մայր
Aunt	Մօրաքայր, հօրաքայր
Uncle	Մօրեղբայր, հօրեղբայր
Sister	Բայր
Brother	Եղբայր
I have	Ես ունիմ
Thou hast	Դու ունիս
He, she, or it has	Ան ունի
We have	Մենք ունինք
You have	Դուք ունիք
They have	Անոնք ունին

I have a father and a mother. He has a brother and a sister. We have an aunt and an uncle. They have a cat and a dog. You have a pretty doll. They have a large ball. Have you a father? Yes, I have. Has he a sister and a brother? Yes, he has. Have we an aunt and an uncle? Yes, we have. Have you a doll? Yes, I have.

A NEW DEART

God says in his book «A new heart also will I give you.» What a lovely promise this is!

We often try to be good do we not? We have found it difficult. and are often disappointed are we not? God sees us struggling do to right, and like a kind tender Father in love pities us, and speaks to us and says, — «I will give you a new heart, a heart that shall truly love, and obey me.» With our old heart we cannot serve Christ, when Satan comes to tempt us, we need a strong friend to help us, God wants to be that strong Friend, and to make us good, but He must first change many things. With His gift of a new heart and a right spirit, we shall become His happy little children, and shall desire to do right, and we shall pray every day that we may be good, and do good. And shine for Him, and lead others to love and serve God too. Every body can know very soon if we have a new

heart, because the old heart is selfish, and often unkind, while the new heart is full of the love of Jesus Christ. Have we accepted God's gift of this new heart?

It is the best gift in all the world. and means life and happiness, not only down here in this world, but it will mean a home in heaven with our Saviour when this world is no more for us. Let us go to Jesus and tell Him we cannot be good without the New Heart, and He will help us for He is our Lord and Saviour. He will give us His Spirit and the new life mean the new heart. Old things will pass away and all things will become new. And we shall become beautiful for Jesus.

May God help us to be His dear children. to know the voice of Christ, who Says, — «Suffer little children to come unto me.» He wants us in order to bless us and make us harpy.

A. M. Burgess

Տպ. «Առաքել» փրք